ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

26.05.2023թ.

Սևան համայնք

2023թ. մայիսի 26-ին ժամը 12.00-ին կայացավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /երկրորդ հանրային քննարկում/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումը:

Բացման խոսքով հանդես եկավ Սևան համայնքի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ Հայկ Ղուկասյանը:

Հայկ Ղուկասյանը ներկայացրեց հանրային քննարկման նպատակը և խոսքը փոխանցեց Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հերիքնազ Մկրտչյանին:

Հերիքնազ Մկրտչյանը ներկայացրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը /այսուհետ Օրենք/,դրան համապատասխան փորձաքննական գործընթացը: Նշեց, որ Օրենքով սահմանված կարգով իրականացվում է հանրային երկրորդ քննարկումը ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման լրամշակված հայտի վերաբերյալ: Նախնական գնահատման հայտի փորձաքննությանը մասնակցել են նախարարության ստորաբաժանումները, փորձաքննության ընթացքում հայտը լրամշակվել է:

Վահե Հարությունյանը ներկայացրեց հանրային լողափի նախագծային լուծումները:

Հրանուշ Ալեքսանյանը ներկայացրեց բնապահպանական հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

Հնչեցին հարցեր կապված մաքրման կայանի տեղադրման, ենթակառուցվածքների առկայության, հիմքերի ամրակցման, ոչ հիմնական շինությունների նիշերի, տարածքի մաքրման աշխատանքների, տարածքում շոգ ժամանակահատվածում առաջացող հոտի հետ կապված, որոնց վերաբերյալ տրվեցին պատասխաններ:

Հ. Ղուկասյանը ավարտեց հանրային քննարկումը, հավելելով, որ 5 աշխատանքային օրվա ընթացքում կտրվի արձանագրությունը, տեսաձայնագրությունը, մասնակիցների ցանկը:

Հանրային քննարկման մասնակիցները հնչեցրին իրենց դրական կարծիքը նախատեսվող գործունեության վերաբերյալ: